

**Թողարկման վերջնական պայմաններ
11 Սեպտեմբերի 2019թ.
Ինեկոբանկ ՓԲԸ
անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի
պարտատոմսեր**

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված 04 Հուլիսի 2019թ. ՀՀ ԿԲ-ում՝ ՀՀ ԿԲ նախագահի 03.07.2019թ. թիվ 1/448 Ա որոշում), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են **www.inecobank.am** հասցեում:

<p>Ընդհանուր տեղեկություններ Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված):</p>	
Թողարկող	Ինեկոբանկ ՓԲԸ
Երաշխավորող	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	2019-2
Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	1,500,000,000.00 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Մանրամասն ներկայացված է Ազդագրի 2.3. կետում՝ «Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն» :

Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
Առաջարկի գինը	<p>Պարտատոմսերի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.</p> $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ՝ DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է: DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց y - մինչև մարում եկամտաբերություն</p>
Անվանական արժեքը	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ
Քանակը	150,000.00 (մեկ հարյուր հիսուն հազար) հատ
Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	23 սեպտեմբերի 2019թ. ժամը 10:00
Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	23 դեկտեմբերի 2019թ. ժամը 16:30 Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչև սույն կետում նշված ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ տեղաբաշխվել է վերջին պարտատոմսը:
Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMINECB26ER9
Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար	Ինեկոբանկ ՓԲԸ 2019թ. մայիսի 14-ի Խորհրդի Որոշում թիվ 232-1, Ինեկոբանկ ՓԲԸ 2019թ. սեպտեմբերի 11-ի Տնօրինության որոշում թիվ 37:

առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ	
Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Արժեկտրոնները հաշվարկվում են թողարկման օրվանից: Պարտատոմսերի թողարկման օրն է 23.09.2019թ.
Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը,	Արժեկտրոնի տոկոսադրույք՝ 9.75% տարեկան, վճարման պարբերականություն՝ կիսամյակային
Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը, այն է՝ 23 մարտի 2020թ., 23 սեպտեմբերի 2020թ., 23 մարտի 2021թ., 23 սեպտեմբերի 2021թ., 23 մարտի 2022թ., 23 սեպտեմբերի 2022թ.:
Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում /Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual) Օրերի հաշվարկման պայմանականությունը Բանկի պարտատոմսերի համար համարվում է փաստացի/փաստացի , ընդ որում DCS = Օրերի փաստացի քանակը, D2M2Y2 - D1M1Y1 DCC = Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 DSN = Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է. D2M2Y2 գործարքի կատարման ամսաթիվն է D3M3Y3 գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Արժեկտրոնի կուտակումը կատարվում է հետևյալ բանաձևով՝ $AI = FV \times \frac{C}{f} \times \frac{DCS}{DCC}$ Որտեղ՝ AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է, FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույքն է, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում)

Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ	
Մարման ժամկետը	Պարտատոմսերի մարման օրը՝ պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրը: Պարտատոմսերի մարման օրն է՝ 23 սեպտեմբերի 2022թ.
Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	10,000 (տաս հազար) ՀՀ դրամ
Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Ժամկետ(ներ)ը	36 ամիս
Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
Այլ տեղեկություններ	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ	
Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	Ինտերբանկ ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17
Տեղաբաշխման այլ պայմաններ	Տեղաբաշխումը իրականացվում է բաց բաժանորդագրության միջոցով, որի մանրամասները ներկայացված են Ազդագրի 2.4 կետում:
Այլ տեղեկություններ	
Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին:
Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող

<p>թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին(շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում)</p>	<p>օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ-ն:</p>
<p>Արժեթղթի վարկանիշը</p>	<p>Արժեթղթերը չունեն վարկանիշ</p>
<p>Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը</p>	<p>Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից, Թողարկողի կողմից սահմանված Հայտ-հանձնարարականում նշված ծավալով պարտատոմսեր ձեռք բերելու համար ահնրաժեշտ դրամական միջոցները Թողարկողի մոտ այդ նպատակով բացված 205000013753691 դրամային տարանցիկ հաշվին մուտքագրելուց հետո: Ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի օպերատորից:</p>


Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն-
տնօրինության նախագահի ժ/պ
Արեն Նալթակյան



11.09.2019թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն, տնօրինության անդամ
Հայկ Ոսկանյան




11.09.2019թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, տնօրինության անդամ
Արտեմ Չիչյան



11.09.2019թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Ռիսկերի տնօրեն, տնօրինության անդամ
Վաղինակ Խաչատրյան



11.09.2019թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Տեղեկատվական տեխնոլոգիաների տնօրեն,
տնօրինության անդամ
Գառնիկ Թադևոսյան



11.09.2019թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Գործառնական տնօրեն, տնօրինության անդամ
Լևոն Ռուբինյան



11.09.2019թ.
(ամսաթիվ)

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ
Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ
Արշալույս Սահակյան




11.09.2019թ.
(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Գործադիր տնօրեն-
տնօրինության
նախագահի ժ/պ
(պաշտոն)

Արեն Նալթախյան
(անուն, ազգանուն)



11.09.2019թ.
(ամսաթիվ)